Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
ապրիլի 7-ի N 434 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ՖՈՆԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդի ստեղծման, պահպանման և տեղեկատվության տրամադրման կարգը:

2. Պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդն ստեղծվում, պահպանվում է, և տեղեկատվությունը տրամադրվում է «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների համաձայն:

3. Հայաստանի Հանրապետության պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդի՝ պետական գաղտնիք պարունակող փաստաթղթերը պահպանվում, օգտագործվում են, և տեղեկատվությունը տրամադրվում է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի **«**Պետական և ծառայողական գաղտնիք բովանդակող տեղագրագեոդեզիական նյութերից ու տվյալներից օգտվելու համար թույլտվություն ստանալու կարգը հաստատելու մասին» N 1581-Ն որոշման պահանջների համաձայն:

4. Պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդն ստեղծվում, պահպանվում է, և տեղեկատվությունը տրամադրվում է լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության

կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից (այսուհետ՝ կոմիտե):

5. Հայաստանի Հանրապետության պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդում նյութերն ու տվյալները համալրվում և դուրս են գրվում կոմիտեի նախագահի հրամանով ստեղծված փորձագիտական հանձնաժողովի կողմից:

II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ՖՈՆԴԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

6. Հայաստանի Հանրապետության պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդը (տեղեկատվական բանկը) ստեղծվում, համալրվում և թարմացվում է լիազորված պետական կառավարման մարմնի կողմից՝ «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ պետական նշանակության քարտեզագրական և գեոդեզիական աշխատանքների իրականացման արդյունքում ստեղծված նյութերի և տվյալների հիման վրա:

7. Հայաստանի Հանրապետության պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդում պահպանվում են «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ պետական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների արդյունքում ստացված նյութերն ու տվյալները:

8. Հայաստանի Հանրապետության պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդի նյութերն ու տվյալները պահվում են կոմիտեում՝ անժամկետ:

9. Կոմիտեն Հայաստանի Հանրապետության պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդում ընդգրկված նյութերի և տվյալների ցանկը տեղադրում է իր պաշտոնական կայքում:

III. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ՖՈՆԴԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

10. Հայաստանի Հանրապետության պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդի նյութերը և տվյալները ենթակա են տրամադրման՝ դիմումի՝ համաձայն N 1 ձևի, կամ գրության հիման վրա, որտեղ նշվում են պահանջվող նյութի անվանումը, քանակը և այլ անհրաժեշտ տվյալներ:

11. Հայաստանի Հանրապետության պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդի նյութերից և տվյալներից կարող են օգտվել ֆիզիկական ու իրավաբանական անձինք, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինները:

12. Հայաստանի Հանրապետության պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդից տեղեկատվությունը տրամադրվում է «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մարտի 9-ի «Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տեղեկատվության տրամադրման կարգը հաստատելու մասին» N 155 որոշման պահանջնե-րին համապատասխան:

13. Քարտեզագրագեոդեզիական ֆոնդի նյութերի (ոչ էլեկտրոնային տարբերակով) ընօրինակները տրամադրման ենթակա չեն: Օգտագործողներին քարտեզագրագեոդեզիա-կան ֆոնդի նյութերը տրամադրվում են էլեկտրոնային և (կամ) թղթային կրիչներով: Կոմիտեում ծառայությունների մատուցման ավտոմատացված համակարգի ներդրման դեպքում տեղեկատվությունը կարող է տրամադրվել նաև համացանցի միջոցով:

14. Հայաստանի Հանրապետության քարտեզագրագեոդեզիական ֆոնդի նյութերի և տվյալների հաշվառման, տեղեկատվության տրամադրման հաշվառման մատյանների ձևաթղթերը ներկայացված են NN 2 և 3 ձևերում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ձև N 1

Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր անշարժ
գույքի կադաստրի պետական
կոմիտեի աշխատակազմի
«Տեղեկատվական կենտրոն»
ստորաբաժանման ղեկավար՝

_____

_____

_____
(դիմողի անունը, հայրանունը, ազգանունը)

_____
(դիմողի քաղաքացիությունը)

_____
(դիմողի բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը)

Հեռ.՝ _____

Դ Ի Մ ՈՒ Մ N _____

Խնդրում եմ տրամադրել՝

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Վճարումը երաշխավորում եմ:

Դիմողի վավերապայմանները _____

ԴԻՄՈՂ _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

_____ _____ 20 թ.

11_0434

Ձև N 2

Մ Ա Տ Յ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ
ՖՈՆԴԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

NN ը/կ	Գույքագրման համարը	Օբյեկտի անվանումը և (կամ) ծածկագիրը	Ստացված նյութի տեսակը					Նյութի ոչնչացումը, արձանագրության համարը և ամսաթիվը	Դատողագրություն
			նյութի տեսակը, կոորդինա-տային համակարգը	ընօրինակի (պատճենի, այդ թվում՝ էլեկտրոնային կրիչի վրա) անվանումը	կազմողական ընօրինակը (հրատարակչական ընօրինակը)	տեղեկատվությունը (ֆորմատը)	այլ նյութեր		
1	2	3	4	5	6	7	8	9	10

Ձև N 3

Մ Ա Տ Յ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ՖՈՆԴԻՑ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

NN ը/կ	Դիմումի համարը	Դիմողի անունը, ազգանունը (անվանումը)	Դիմողի վայրերաբնակությունները	Նյութի կամ տվյալի տեսակը				Տրամադրման օրը, ստացողի ստորագրությունը	Ծանոթագրություն
				Նյութի կամ տվյալի անվանումը	չափի միավորը	քանակը	գույնագրման համարը		
1	2	3	4	5	6	7	8	9	10